

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Սրբալույս մեռոնի օրհնության և Հայոց Հայրապետի գահակալության 20-ամյակին նվիրված հանդիսությունները Մայր Աթոռում եզրափակվեցին եպիսկոպոսական ձեռնադրությամբ:

Վեհափառ Հայրապետը հոկտեմբերի 17-ին, կիրակի օրը, Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում և եպիսկոպոս ձեռնադրում Երուսաղեմի սրբոց Հակոբյանց միաբանության անդամներ տ. Կյուրեղ ծ. վրդ. Գաբիկյանին և տ. Դավիթ ծ. վրդ. Սահակյանին:

Շաբաթ օրը, երեկոյան ժամերգությունից հետո, Մայր տաճարում կատարվում է նոր-

Մի պահ ձեռնադրությունից

ընծաների «ընտրութիւն և ուխտադրութիւն՝ ըստ սահմանի Հայց. եկեղեցւոյ»:

Իշման ս. սեղանի առաջ նորընծաներն ուխտում են անխոտոր և անսայթաք ընթանալ հայ եկեղեցու ուղղափառ վարդապետության ճանապարհով ու հավատարիմ լինել **սրբոյ Էջմիածնի մինչև ցվախճան կենաց իւրեանց, կալ մնալ հլու հպատակութեամբ ի ներքոյ իշխանութեան և հրամանաց սրբոյ կաթուղիկէ Մայր Աթոռոյս, ծառայել երկիւղիւ Տեառն, յօգուտ և ի փառս անուան սրբոյ Էջմիածնի:**

շնորհում եպիսկոպոսական յոթ աստիճաններ: Խարտավիլակի պաշտոնը կատարում է տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը:

Ապա ս. պատարագը շարունակվում է Ավագ խորանի վրա, մինչև Ճաշոց գրքի ընթերցումը, որից հետո շարունակվում է ձեռնադրության կարգը:

Մայր տաճարի կամարների տակ հնչում է «Աստուածային և երկնաւոր շնորհ, որ միշտ լնու զպէտս սպասաւորութեան առաքելական եկեղեցւոյ, կոչէ զԿիւրեղ և զԴա-

Մի պահ ձեռնադրությունից

Ապա, եպիսկոպոսացման երդումնագրի ընթերցումից հետո, նորընծաները ստորագրում են այն: Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանն ու Ծիրակի թեմի առաջնորդ տ. Նարեկ եպիսկոպոս Շաքարյանը վկայում են ուխտադրությունը:

Կիրակի օրը, ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը Մայր տաճարի ս. Ստեփանոսի սեղանի առաջ, Իրեն առընթերակա ունենալով տ. Նարեկ և տ. Գևորգ եպիսկոպոսներին ու բազմած Հայրապետական Աթոռի վրա, սկսում է ձեռնադրության կարգը և աղոթքով ու օրհնությամբ, ըստ Ձեռնադրության Մաշտոցի հրահանգի,

ւիթ վարդապետունս ի քահանայութենէ յեպիսկոպոսութիւն» շարականը, մինչ նորընծաները ծնրադիր ու դեմքերը դարձրած դեպի հավատացյալները, հրաժարվում են աշխարհից:

Սույն կոչման շարականը կրկնվում է երեք անգամ: Ապա Վեհափառ Հայրապետը կատարում է օծման կարգը: Համապատասխան աղոթքներով ներընծաներին տրվում են եպիսկոպոսական գավազան և մատանի՝ ի նշան եկեղեցու իշխանավորի շնորհված հեղինակության:

Վեհափառ Հայրապետը համբուրում է նորապսակ սրբազանների ճակատները և, ներշնչված օրվա խորհրդով, Իր հայրական

պատգամներն ու հորդորներն է տալիս նրանց, շնորհավորում օրվա շնորհաբաշխությունը՝ շեշտելով եպիսկոպոսական իշխանության հոգևոր նշանակությունը եկեղեցու նվիրապետության մեջ ըստ առաքելական կանոնների և հայրապետահաստատ հրահանգների:

Ժամը 15-ին, ի պատիվ հայ եկեղեցու նորապսակ երկու իշխանավորների, տրվում է ճաշկերույթ, Վեհարանի սեղանատանը:

Վեհափառ Հայրապետը մի անգամ ևս շնորհավորում է նորապսակ տ. Կյուրեղ և տ. Դավիթ եպիսկոպոսներին՝ տալով նրանց եպիսկոպոսական պանակե, որպես եպիսկոպոսական իշխանության արտաքին նշան, և ցանկանում նրանց տեսնել հայ եկեղեցու ու Մայր Աթոռի նվիրյալ և լավագույն ծառայողների շարքում:

Այնուհետև Հայոց Հայրապետին ուղղած շնորհակալական և երախտագիտական որդիական ջերմ խոսք են ասում նորապսակ սրբազանները՝ վերանորոգելով իրենց ուխտը՝ անձնահանջ սիրով և անմնացորդ նվիրումով ծառայելու Մայր Աթոռին, ս. Հակոբյանց վանքին, հայ եկեղեցուն ու հայ ժողովրդին, Հայոց Հայրապետի և տ. Եղիշե սրբազան պատրիարքի օրինակով, Նրանց անմիջական ղեկավարության և օրհնության ներքո:

Ընդունելությունն ավարտվում է Հայոց Հայրապետի «Պահպանիչ»-ով: